

## ԱՐՏԱՓԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—Սիօնիստների ճ-րդ համաժողովը.—Անգլօ-բօէրական հաշտութեան հարցը.—«Խտալական իրրիդենտիզմ» Ցրիեստում.—Ցուրի համաժողովի որոշումները:

Սանասարեան վարժարան:

Այս տարուայ սկզբում Շվեյցարիայի Բազէլ քաղաքում սիօնիստների արդէն հինգերորդ բազմամարդ համաժողովն էր տնեղի ունենում և աշխարք զարմացնում իր առասպելական առումով...

Հրէական ազգի այդ շարժման համակրում են շատ քրիստոնեաներ, բայց ամենից շատ համակրանք են յայտնում Անգլիայում, ամեն տեսակ ազատագրութիւնների այդ որրանում, ուժեղ և յաճախ հակասական հոսանքների այդ հայրենիքում...

Ժամանակակից պետական-հասարակական կեանքի երեք շարժումներից՝ ազգայնական, բանուորական և կանանց, ներկայումս Անգլիայում ամենաուժեղը ազգայնականն է. յայտնի է թէ ինչ սուր կերպարանք ստացաւ իրլանդական հարցը այն օրից, երբ հօմրուլը դադարեց ազատական կուսակցութեան առաջնակարդ խնդիր լինելուց, իրլանդական հարցին միացան բօէրականը և նրանց ցեղակից Կապշտատի հօլլանդական ազգարնակութեան հակաանդիական շարժումը: Հաղիւ թէ այսուհետեւ նոյն իսկ խաղաղութիւնը կարողանայ վերականգնել այդ թշնամացած հօլլանդական և անգլիական ցեղերի մէջ փոխադարձ սէր և վատահութիւն: Այսպէս որ, վերջ ի վերջոյ, այնքան զահաբերութիւնից, արիւնհեղութիւնից յետոյ Անգլիան ստեղծեց հեռաւոր իր կօլօնիայում մի այնպիսի վառնդ, որ ունի իր կողքին, իրլանդիայում...

Երկու տարի առաջ իր մեծութեամբ և ոյժով յոխորդացող Անգլիան այժմ, նեղը ընկած, ուղում է մի պատուաւոր ելք գտնել և հաշտութիւն կնքել փոքրիկ, բայց իր պաշտպանած

դատի արդարութեամբ անընկանելի բօէքների հետ, որոնք դեռ  
շարունակում են ոչ միայն քաջութեան դասեր տալ իրանց  
թշնամիներին, այլ և՝ ազնւութեան, մեծահոգութեան դասեր.  
այդպէս, օրինակ, վերջերումս Դէլարէյը գերելով անդլիական  
գեներալ Մետուէնին, չուզեց օրինակ վերցնել անդլիացիներից  
և մահուան պատժի ենթարկել, այլ բաց թողեց ՚րան:

Հաշտութիւնը արագացնելու տենչը այժմ այնքան ընդ-  
հանրացած է Անգլիայում, որ նոյն իսկ անգլիական եկեղեցու  
և պիսկոպոսները Լօնդօնում և այլ քաղաքներում յորդորում են  
ժողովրդին՝ աղօթել խաղաղութիւն հաստատելու համար... մինչ-  
դեռ երկու տարի առաջ Քրիստոսի նոյն այդ հետեւողները քէն  
ու ոլս էին սերմանում և փառաբանում պատերազմը...

Թողոր նշաններից երեսում է, որ արդէն մօտալուտ է խաղա-  
զութիւնը. զիջանելով անգլիացիների ինքնասիրութեան Տրանս-  
վասար նախագահ Շալկ-Բուրգէրը առաջինն է սկսում բանակցու-  
թիւն Հեռագիրներից յայտնի է, որ Շալկ-Բուրգէրը թոյլտու-  
թիւն ստացաւ գնալ Պրետօրիա և տեսակցուել գեներալ Կիտչե-  
նէրի հետ Յայտնի է նաև որ նոյն Շալկ-Բուրգէրը, անգլիա-  
կան բանակի հրամանատարի դիմութեամբ, գնաց Օրան-  
ժեան հանրապետութեան նախագահ Շտէյնի հետ խորհրդակ-  
ցելու: Նշանակելի իրողութիւն է և այն, որ անգլիական զօրքի  
նախակին գլխաւոր հրամանատար լորդ Վոլսլէյը ուղեւորուեց  
Հարաւային Աֆրիկա: Նպաստաւոր հանդամանք է հաշտութիւն  
կապելու հարցում նաև՝ բօրսային նիշշէականութեան հզօր ներ-  
կայացուցիչ Սեաիլ Բօդսի մահը կապչտատում. խաղազութեան  
խանգարիչ մի չար հոգի վերցաց միջից:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ աղքայնական այս  
տաք պայքարի ժամանակ համարեա աննկատելի են անցնում  
անդլիական կեանքում միւս երկու հոսանքների արտայայտու-  
թիւնները. ով է, օրինակ, առանձին ուշադրութիւն դարձնում  
Վիֆէզի քարտաշների մեծած աւալ զործադուլի վրայ կամ պար-  
լամենտին՝ 38 հազար կանանց ստորագրութեամբ ներկայացրած  
խնդիրը վրայ, որով պահանջում են պարլամենտական ընտրո-  
ղական իրաւունք կանանց համար:

Իսկ տեղ-աեղ, Եւրոպայում, աղղայնական հարցը խանուե-  
լով աշխատանքի արդար պահանջների հետ աւելի սուր կերպա-  
րանք է տալիս ընդհարումներին, ինչպէս, օրինակ, այդ տեղի  
ունեցաւ Տրիեստում, ուր նաւերի բնոնակիրների զործադուլին  
աւտարիական կառավարութիւնը «փտալական իրրիդենտի»  
(անջատում Աւստրիայից և միացում Խոտալիայի հետ) բնաւո-

րութիւն տալով, խաղաղութիւնը վերականգնելու համար, դիմաց զինքի՝ մարդկային զոհեր բռելով իր սխալ կասկածամոռւթեան...

Այլ է Փրանսիական կեանքը. ազգայնական հարցը գեր չի կատարում այդտեղ, ուստի բոլոր ներքին էներգիան զնում է միւս հոսանքների վրայ Մրանսիայում այժմ հերթական է միջնակարգ գարուցի բեֆօրմների հարցը: Ի հարկէ, ներկայ մինիստրութիւնը այնքան արմատական չէ, որ համաձայնուի Վիվիանիի առաջարկութեան և թէ միջին, թէ բարձր կրթութիւնը դարձնի ձրի, ինչպէս արդէն ձրի է ստորին կրթութիւնը: Բայց և այնպէս այն բեֆօրմները, որ մշակում են այժմ աւելի գերմօկրատիական են, քան մինչև այժմ եղածները: Գաղափար տալու համար առհասարակ Փրանսիական աւելի արմատական ներքին պահանջների հետ, աւելորդ չէ ծանօթացնել ընթերցովին վերջերում Տուրում կայացած մի համաժողովի մշակած պրոցրամմի հետ:

Ահա այդ պրոցրամմը, համառօտած.—Ընդհանուր և ուղղակի ձայնտութիւն երկու սեփի բոլոր Փրանսիական քաղաքացիների համար. ծերակոյտի և հանրապետութեան նախագահի պաշտօնի վերացում. այժմ առաջին մինիստրին պատկանող իշխանութիւնը յանձնել պարլամենտից ընտըրուած առանձին գործադիր մի կօմիտետի. եկեղեցու բաժանումը պետութիւնից, պաշտամունքների և կրօնական միաբանութիւնների յատկացրած բիւղժէտի ոչնչացումը. դատաստանական հիմնարկութիւնների վերակազմութիւն նոր սկզբունքներով՝ ժողովրդից ընտրուած դատաւորներով և երգուեաններով. ուսուցանելու կատարեալ ազատութիւն, մինչոյն ժամանակ արգելելով հոգևորականութեան՝ պարապել դասաւանդութեամբ. առաջնակարգ անհրաժեշտութիւն ունեցող առարկաների վրայ դրած բոլոր հարկերի վերացում և պրօքեսսիւ եկամտային հարկերի ներմուծում. ութժամնայ բանուրական օր և պարտադիր տօնական հանգստութիւն շաբաթը մի անգամ. թոյլ չը տալ անչափահաններին (մինչև 14 տարեկան) բանեցնել և արգելել կանանց գիշերային աշխատութիւնը. աշխատաւորների կազմակերպութիւններին և մունիցիպալիտետներին իրաւունք տալ նշանակել օրավարձի նուազական չափերը. հասարակական ապահովագրութեան ազգային սիստեմ. երկաթուղիները, հանքերը, Փրանսիական բանկը և խոշոր շաքարային գործարանները ազգային սեփականութիւն դարձնել բոլորի համար արժան բնակարաններ. մշտական զորքի տեղ

միլիցիա պահել։ Ահա ֆրանսիայի ամենաարմատական կուսակցութեան տեսչանքները, desiderataն։

L. U.

### Սանասարեան Վարժարան։

Այս պահուս, երբ Սանասարեան վարժարանի Կ. Պոլսոյ խնամակալութեան ոեղանի վրայ կը գտնուի էրզրումի տեղական Հոգաբարձութեան մատուցած քանամեայ տեղեկագիրը, որուն ուսումնասիրութեամբ կը զբաղի խնամակալութիւնը և միեւնոյն ժամանակ խորհրդակցութիւններ տեղի կ'ունենան այդ հաստատութիւնը՝ Խարբերդ Սորսորի վանքը տեղափոխելու, կ'արժէ որ լուրջ և անկողմնակալ ոգւով պարզուի Սանասարեանի արդի վիճակը և կտրուկ տնօրինութիւններ ըլլան միանգամ ընդ միշտ բառնալու տրոտունջի առիթներն ու վարժարանը իր անունին և նպատակին համապատասխանող դիրքի մը վերածելու, ինչ որ ամէնուս բաղձանքն ու փափաքն է միակ։

Ազգային թերթերու մէջ, Սանասարեանի շուրջ՝ բաւական թեր ու դէմ հրատարակութիւններ և կարծեաց փոխանակութիւններ եղած են ասկէ առաջ. մասնաւորապէս «Բիւզանդիոն», «Արեւելք» և «Սուրհանդակ» զբաղեցան այդ խնդրով. «Բիւզանդիոն»-ի դիրքը յարձակողական և «Արեւելքին»-ը պաշտպանողական գտած եմ ընդհանուր գիծերու մէջ, և որչափ կրցած եմ ըմբանել, այդ երկու թերթերն ալ չափազանցութեան զիմնացին. մէկը ջանաց վարժարանը կատարելութեան զէնիթը բարձրացնալ և միւսը գուն զործեց անկերպարանութեան նատիրը իշեցնել. փոխանակ ուղղակի վէրքերն ու անոնց դարմանները շօշափելու, անձնական հաշիւններով և կիրքի երանգներով խճողեցին ու որակեցին իրենց բոլոր տեսութիւնները և ըստ այսմ հիւրընկալեցին թղթակիցներու յօդուածները և քննադատութիւնները. պէտք է խոստովանիլ սակայն որ «Սուրհանդակ»-ի յօդուածները գոհունակութեամբ կարդացուեցան, որովհետեւ վարժարանին բարւոքումը միայն կը նշմարուէր անոնց մէջ՝ կէտնպատակի։

Մտադրութիւն չունինք այդ անցեալ հրատարակութիւններով զբաղելու, որոնք, վերջապէս ինչ ձեւի տակ ալ ընդունելու ըլլանք, սա ճշմարիտ է թէ՝ Սանասարեան վարժարանին թերի և բարեփոխելի կողմեր ունենալը ծանօթացու-